ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի 2024 թվականի թիվ 31-Ա

ք. Երևան

«ԽՈՒՍՏՈՒՓ ԷՖ ԷՄ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԱԶՈՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով «ԽՈՒՍՏՈՒՓ ԷՖ ԷՄ» ՍՊ ընկերության 2024 թվականի ապրիլի 1-ի հեղինակազորման վկայագրի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

1. Բավարարել դիմումը և ուժը կորցրած ճանաչել «ԽՈՒՍՏՈՒՓ ԷՖ ԷՄ» ՍՊ ընկերությանը 2022 թվականի մարտի 16-ին տրամադրված ՀՎ № 056 հեղինակազորման վկայագիրը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ԽՈՒՍՏՈՒՓ ԷՖ ԷՄ» ՍՊ ընկերությանը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

2024թ. ապրիլի 12
ք. Երևան